ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ախուրյան համայնքի «Ազատանի Արփի մանկապարտեզ»
ՀՈԱԿ-ի տնօրենի 2026 թվականի մարտի 23-ի թիվ 27-Ա
հրամանի

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի «Ազատանի Արփի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության հոգեբանի 0,5 դրույք թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մրցույթ հայտարարելու մասին

N	**Թափուր պաշտոնի անվանումը**	**Հավակնորդին ներկայացվող պահանջները (չափանիշները)**	**Մրցույթին մասնակցելու իրավունք չունի այն անձը, ով՝**	**Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերը**
1	2	3	4	5
1	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի «Ազատանի Արփի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության հոգեբան (0,5 դրույք)	1)**Որակավորման պահանջները** Նախադպրոցական ուսումնական հաստատության հոգեբանը պետք է ունենա՝ բարձրագույն մասնագիտական կրթություն։ **2) Ընդհանրական պահանջները** Նախադպրոցական ուսումնական հաստատության հոգեբանի պաշտոն զբաղեցնողը պետք է իմանա,տիրապետի ա/ «Կրթության մասին», «Նախադպրոցական կրթության մասին», «Լիցենզավորման մասին» «Երեխայի իրավունքների մասին», «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքները. բ/ նախադպրոցական կրթական չափորոշիչները և իր պաշտոնային պարտականություններին վերաբերող նորմատիվ ակտերը, իրավական այլ փաստաթղթեր. գ/ ընդհանուր և մանկավարժական հոգեբանություն, ընդհանուր մանկավարժության,անձի և դիֆերենցիալ	**Մրցույթին մասնակցելու իրավունք չունի այն անձը,** որը՝ 1) դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ, 2)դատական կարգով զրկվել է մասնագիտական գործունեությամբ զբաղվելու իրավունքից, 3)տառապում է ՀՀ կառավարության կողմից հաստատված այնպիսի հիվանդությամբ, որը կարող է խոչընդոտել մանկավարժական գործունեության իրականացմանը, 4)դատապարտվել է հանցագործության համար և դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ, բացառությամբ այն դեպքերի, երբ դատապարտվել է ոչ դիտավորյալ հանցագործություն	1)դիմում (Ձև1) 2)անձը հաստատող փաստաթուղթ. 3)կրթության մասին փաստաթուղթ 4)աշխատանքային ստաժի մասին տեղեկանք/առկայության դեպքում/ 5)ինքնակենսագրություն (ձև4) 6) մեկ լուսանկար՝ 3×4 չափի 7)այլ պետությունների քաղաքացիները՝Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հաստատող փաստաթուղթ, 8)Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ կամ զինվորական կցագրման

		հոգեբանության, տարիքային և մանկական հոգեբանության,սոցիալական հոգեբանության հիմունքները։ դ/ համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկայով աշխատելու հմտություններին։	կատարելու համար։	վկայական, 9)հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում)։
		Նախադպրոցական ուսումնական հաստատության հոգեբանի թափուր պաշտոնի մրցույթի մասնակիցների՝ 3-րդ սյունակի 1-ին կետով նախատեսված պահանջները հավասարապես բավարարելու դեպքում մրցութային հանձնաժողովի կողմից մասնակցին հաղթող ճանաչելու մասին որոշում կայացնելիս կարող են հաշվի առնվել նաև 2-րդ կետով նշված լրացուցիչ պահանջները։		**Մրցույթին մասնակցելու համար դիմած քաղաքացին փաստաթղթերը ներկայացնում է անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող այլ փաստաթղթով։**
2	**Մրցույթն անցկացնելու վայրը, օրը, ժամը**	**Դիմումների և փաստաթղթերի ընդունումը**		**Դիմումների և փաստաթղթերի ներկայացման ժամկետները**
	Վայրը՝ ՀՀ ՇՄ Ախուրյան համայնքի Ազատան բնակավայր,19 փողոց, 17/3 շենք Օրը՝ 2026 թվականի ապրիլի 23-ին, ժամը՝14:00	Փաստաթղթերը ներկայացնելու, լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար դիմել՝ **ՀՀ ՇՄ Ախուրյան համայնքի «Ազատանի Արփի մանկապարտեզ» ՀՈԱԿ 19 փողոց, 17/3շենք Հեռ.094002600 Հարցաշարերը՝ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի «22» հոկտեմբերի 2024 թվականի N1981-Ա/2 հրաման։ Փաստաթղթերի ընդունումը՝ ամեն օր, ժամը 09:00-17:00, բացի շաբաթ և կիրակի**		**2026 թվականի մարտի 23-ից ապրիլի 17-ը ներառյալ**